1. Ինչպիսի՞ մարմին է Հաշվեքննիչ պալատը:
   1) Հաշվեքննիչ պալատն արտաքին պետական հաշվեքննություն իրականացնող անկախ պետական մարմինն է:
   2) Հաշվեքննիչ պալատը ներքին պետական հաշվեքննություն իրականացնող անկախ պետական մարմինն է:
   3) Հաշվեքննիչ պալատն արտաքին և ներքին պետական հաշվեքննություն իրականացնող անկախ պետական մարմինն է:
   4) Տեղական ինքնակառավարման մարմիններում հաշվեքննություն իրականացնող անկախ պետական մարմինն է:

(«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մաս)

2. Հաշվեքննիչ պալատը հաշվեքննություններն իրականացնում է՝
   1) Միայն ֆինանսական և ներքին հաշվեքննության տեսակներով:
   2) Ֆինանսական և (կամ) համապատասխանության և (կամ) կատարողականի հաշվեքննության տեսակներով:
   3) Միայն ֆինանսական և արտաքին հաշվեքննության տեսակներով:
   4) Միայն կառավարման արդյունավետության հաշվեքննութան տեսակներով:

(«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մաս)

3. Որքա՞ն է ամենամյա նվազագույն արձակուրդի տևողությունը վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում:
   1) 20 աշխատանքային օր
   2) 22 աշխատանքային օր
   3) 24 աշխատանքային օր
   4) 30 օր

(ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, հոդված 159, 1-ին մաս)

4. Համաձայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի՝ ո՞րը անձնական տվյալները մշակելու հիմնական սկզբունքներից **չէ:**
   1) Հավասարության սկզբունք
   2) Օրինականության և համաչափության սկզբունք
   3) Հավաստիության սկզբունք
   4) Սուբյեկտների նվազագույն ներգրավման սկզբունք

(«Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենք, հոդվածներ 4-7)